ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ (1969-1970ԹԹ.)

Էդիտա Ասատրյան
ԵՊՀ Արաբագիտության ամբիոնի հայցորդ
edit-asatryan@mail.ru

Բանալի բառեր՝ *Արաբ-իսրայելական հակամարտություն, հյուծող պատերազմ, խաղաղ կարգավորում, պաղեստինյան հիմնախնդիր, «Ռոջերսի նախագիծ», «Ալլոնի ծրագիր», «Հուսեյնի ծրագիր»:*

1967թ. հունիսի 6-օրյա արաբ-իսրայելյան պատերազմում Իսրայելին հաջողվեց գրավել Սինայ թերակղզին և Գազայի հատվածը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գոլանի բարձունքներն ու Արևելյան Երուսաղեմը [1]: Այս պատերազմին հաջորդած տարիներին արաբ-իսրայելական հակամարտության և դրա առանցքը կազմող պաղեստինյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը դարձավ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ոչ տարածաշրջանային շահագրգիռ կողմերի քաղաքական օրակարգի կարևոր բաղադրիչը:

1969թ. փետրվարին Իսրայելի արտաքին գործերի նախարար, փոխվարչապետ Ալլոնը հանդես եկավ պաղեստինցի

[1]1967 թ. արաբ-իսրայելական պատերազմի մասին մանրամասն տե՛ս Карасова Т.А., Израиль и США: Основные этапы становления стратегического партнерства (1948-2015), М., 2015, с. 104, Примаков Е.М., Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина X-начало XXI века), М., 2006, с. 113, Bregman A., Israel Wars. A History since 1947, Routledge, 2002, p. 208.

փախստականների խնդիրների լուծման իր ծրագրով [2] : Այն նախատեսում էր գրավված որոշ տարածքներում արաբական ինքնավար միավորի հիմնում՝ առանց արտաքին հարաբերություններ իրականացնելու իրավունքի: Ենթադրվում էր, որ Գազայի հատվածն ավտոմայրուղով պետք է կապվեր Հորդանանի հետ, Գոլանի բարձունքի մեծ մասը մնալու էր Իսրայելի ենթակայության տակ, իսկ Սինայ թերակղզին գրեթե ամբողջությամբ վերադարձվելու էր Եգիպտոսին [3]: Այդ ծրագիրը սուր քննադատության արժանացավ արաբական աշխարհում, այդ թվում նաև Եգիպտոսում: Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդ Ալ-Նասերը կտրականապես մերժեց «Ալլոնի ծրագիրը», չնայած այն փաստին, որ այն նախատեսում էր Սինայ թերակղզու գրեթե ամբողջական վերադարձ Եգիպտոսին:

Իսկ 1969թ. ապրիլի 10-ին Հորդանանի Հուսեյն թագավորը ներկայացրեց 6 կետից բաղկացած «Մերձավորարևելյան խաղաղ գործընթացի նախագիծը»: Թագավորն առաջարկում էր արաբական երկրներին ճանաչել Իսրայել պետության գոյության իրավունքը, ապահովել անվտանգ նավագնացություն տարածաշրջանի միջազգային ջրերում, իսկ որպես դրա նախապայման՝ Հուսեյնը Թել-Ավիվին կոչ էր անում հետ քաշել իսրայելական զորքերը մինչև 1967թ. հունիսի 4-ը գոյություն ունեցող սահմանները[4]:

Արդեն 1969թ. դեկտեմբերի 9-ին ԱՄՆ-ի պետքարտուղարությունը, Անգլիայի և Ֆրանսիայի հետ

---

[2]Соколов Д.Г., Арабо-израильский конфликт и внешняя политика Соединенных штатов (1917-1974гг.). Введение в проблему, Институт Африки АН СССР, М., 1974, с. 157.

[3]Гейзель З., Политические структуры государства Израиль, Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 2001, с. 77.

[4]Пырлин Е.Д., Ближневосточный лабиринт, М., 1996, с. 27-28.

խորհրդակցությունից հետո, հանդես եկավ նոր «խաղարարար» նախաձեռնությամբ, որը հայտնի դարձավ «Ռոջերսի ծրագիր» անվամբ [5] : Վերջինս այդ ժամանակ զբաղեցնում էր ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնը: Փաստաթուղթը նախատեսում էր 1967թ. գրավված տարածքներից իսրայելական զորքերի դուրս բերում, ինչին ի պատասխան արաբական երկրներն, այդ թվում՝ նաև պաղեստինցիները, պետք է ճանաչեին Իսրայել պետության գոյության իրավունքը և դադարեցնեին նրա դեմ իրականացվող ռազմական գործողությունները [6] : «Ռոջերսի ծրագիրը» նախատեսում էր սահմանների ճանաչում, դիվանագիտական գոտիների ստեղծում, Գազայի հատվածին ու եգիպտական Շարմ Ալ-Շեյխին ժամանակավոր հատուկ կարգավիճակի տրամադրում, որը հետագայում պետք է քննարկվեր Եգիպտոսի, Հորդանանի և Իսրայելի միջև բանակցություններում, ինչպես նաև ազատ նավագնացություն Տիրանի նեղուցներներով[7]: Այն ենթադրում էր նաև Սուեզի ջրանցքով իսրայելական նավերի նավագնացության իրավունք, փախստականների խնդիրների արդարացի լուծում և փոխադարձ ինքնիշխանության ճանաչում [8] : Նախատեսվում էր նաև պաղեստինյան փախստականների խնդրի մասին հատուկ իսրայելահորդանանյան համաձայնագրի կնքում: Արևելագետ Ե. Պիրլինն այս կապակցությամբ նշում է, որ «Ռոջերսի ծրագիրը»

[5]Statement by Secretary of State Rogers, 9 December 1969, Vol. 1-2: 1947-1974 տե՛ս http://www.mfa.gov.il/mfa/foreignpolicy/mfadocuments/yearbook1/pages/9%20statement%20by%20secretary%20of%20state%20rogers-%209%20decemb.aspx [մատչելի է 22.09.2016]

[6]The Rogers Plan Was an American Peace Plan for the Middle East տե՛ս http://www.knesset.gov.il/lexicon/eng/rogers_eng.htm [մատչելի է 22.09.2016]

[7]Куценков А.А., Чичерев А.И., Внешняя политика стран Ближнего и Среднего Востока, М., 1984, с. 162.

[8] Hiro D., The Essential Middle East. A Comprehensive Guide, New York, 2002, p. 448.

պատմական մեծ դեր խաղաց՝ «հող խաղաղության դիմաց» սկզբունքն առաջ քաշելու գործում»[9]:

Կարևոր է նշել, որ «Ռոջերսի ծրագիրը» ժամանակագրական առումով համընկավ Իսրայելի դեմ Սիրիայի և Իրաքի նախաձեռնությամբ, ինչպես նաև Ալժիրի գործուն աջակցությամբ արևելյան ճակատի ամրապնդմանն ուղղված արաբական երկրների դիվանագիտական և քաղաքական ջանքերի ակտիվացման հետ: Հետևաբար, որոշ մասնագետներ գտնում են, որ ամերիկյան վերոհիշյալ ծրագիրը որոշակիորեն նպատակ ուներ նաև թուլացնել արևելյան ճակատը՝ «խաղից հանելով» այդ ժամանակ ամենաազդեցիկ ու հզոր արաբական ուժին՝ Եգիպտոսին, որից հետո նախատեսվում էր, օգտվելով գոյություն ունեցող միջարաբական հակասություններից, մեկուսացնել նաև Հորդանանը[10]:

Նշենք, որ Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդ Ալ-Նասերը սկզբնական փուլում չեզոք դիրքորոշում դրսևորեց «Ռոջերսի ծրագրի» նկատմամբ: Ի հակադրություն Եգիպտոսի՝ Սիրիայի ղեկավարությունն առաջիններից էր, որ մերժեց վերոհիշյալ ծրագիրը՝ այն որակելով որպես «արաբներին պարտվողականություն պարտադրելու փորձ»: Դրանում որևէ խոսք չկար Սիրիայի՝ որպես հակամարտության կողմ լինելու մասին[11]: Պետք է նշել, որ Դամասկոսը շարունակաբար մերժում էր բանակցություններ վարելու և ծրագրեր քննարկելու որևէ

[9] Пырлин Е.Д., նշվ., աշխ., էջ 28:
[10] Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996, Ե., 2000, էջ 30:
[11] Նույն տեղում, էջ 830:

հնարավորություն Իսրայելի և ԱՄՆ-ի հետ՝ վերջինիս համարելով Իսրայելի «քողարկված պաշտպանը»[12]:

Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը /ՊԱԿ/ ևս սուր քննադատության արժանացրեց «Ռոջերսի ծրագիրը»[13]: ՊԱԿ-ը ծրագիրը որակեց «նահանջի ծրագիր», որն ամբողջությամբ արհամարհում էր պաղեստինցիների իրավունքներն ու պայքարը՝ պաղեստինյան հարցը դիտարկելով միայն փախստականների խնդրի հարթությունում»[14]: Պաղեստինի ազատագրության ազգային ճակատը /ՊԱԱՃ/ և ՊԱԿ-ի մեջ մտնող մի քանի այլ պաղեստինյան կազմակերպություններ ևս բացահայտ կերպով քննադատեցին Եգիպտոսի նախագահ Նասերի չեզոք դիրքորոշումը «Ռոջերսի ծրագրի» նկատմամբ: Եգիպտոսի այս դիրքորոշումը հանգեցրեց Պաղեստինի դիմադրության շարժման /ՊԴՇ/ շրջանակներում հակաեգիպտական տրամադրությունների ակտիվացմանը: Բացահայտ հակաեգիպտական դիրքորոշում դրսևորեցին ՖԱԹՀ-ը[15], Պաղեստինի ազատագրության գործունեություն կազմակերպությունը և Արաբական պաղեստինյան կազմակերպությունը:

ԽՍՀՄ-ը ևս կտրականապես մերժեց այս ծրագիրը: Այս կապակցությամբ խորհրդային հետազոտող Ս. Բուրոբինան նշում է, որ «Ռոջերսի ծրագիրը» հետապնդում էր մեկ նպատակ՝ Մերձավոր Արևելքում ամերիկյան քաղաքականությունն

[12] Оганесян Н.О., Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ер., 1985. сс. 51-56.

[13] International Documents on Palestine 1970, Beirut: The Institute for Palestine Studies, Kuwait: The University of Kuwait, 1973, pp. 882-883.

[14] Рубби А., Палестинский марафон. 30 лет борьбы за мир на Ближнем Востоке, М., «Международные отношения», 2001, с. 25.

[15] ՖԱԹՀ-ը՝ Պաղեստինի ազգային ազատագրական շարժումը, հիմնադրվել է 1958 թ.: Շարժման հիմնադիրը Յասեր Արաֆաթն էր:

ակտիվացնել այն ժամանակ, երբ իսրայելական քաղաքականությունը մտել էր փակուղի[16]:

1969թ. դեկտեմբերից մինչև 1970թ. փետրվար ընկած ժամանակահատվածում տեղի ունեցան արաբական բարձր մակարդակի երկու հանդիպումներ՝ Ռաբաթում և Կահիրեում: Ռաբաթի համաժողովում ի ցույց դրվեցին միջարաբական հակասություններն ու տարաձայնությունները, մասնավորապես, դրանք վերաբերում էին արաբ-իսրայելական հակամարտության քաղաքական կարգավորման հնարավորություններին: Սիրիայի և Իրաքի պատվիրակությունները բոյկոտեցին համաժողովի վերջին նիստը՝ որակելով այնտեղ ընդունված որոշումը որպես «ոչ խիստ հակաիսրայելական» [17] : Կահիրեի համաժողովին բնորոշ էր կարծիքների առավել միասնականությունն ու բացահայտ հակասիոնիստական և հակաամերիկյան ուղղվածությունը: Համաժողովը դատապարտեց ԱՄՆ-ի «հակաարաբական կեցվածքը» և կոչ արեց արաբական երկրներին «բոլոր ուժերն ու հնարավորությունները կենտրոնացնել ընդհանուր թշնամու՝ սիոնիզմի դեմ զինված պայքարի վրա»[18]:

1970թ. գարնանը «Ռոջերսի ծրագրին» հավանություն տվեց Հորդանանը, իսկ Եգիպտոսը, որը սկզբնական շրջանում դրսևորում էր չեզոքություն ծրագրի նկատմամբ, 1970թ. հուլիսին ընդունեց այն՝ որոշ վերապահումներով [19] : Եգիպտոսի նմանօրինակ դիրքորոշումը բացատրվում էր այն հանգամանքով,

[16] Буробина С.Д. Эволюция экспансионизма Соединенных Штатов Америки на Ближнем Востоке (середина 69-х, середина 70-х гг.), М., 1980, с. 18.
[17] Freedman R.O., Inter-Arab Politics and the Arab-Israeli Conflict, տե՛u World Politics and the Arab-Israeli Conflict, New York, 1969. p. 96.
[18] International Documents on Palestine 1970, the Institute for Palestine Studies, Beirut, the University of Kuwait, Kuwait, Beirut, 1973, p. 756.
[19] Кон-Шербок Д., Эль-Алами Д., Палестино-израильский конфликт: две точки зрения, М., 2002, с. 241.

որ այս երկիրն էր կրել 1967թ. 6-օրյա պատերազմում Սուեզի ջրանցքի ռազմական գործողությունների հիմնական ծանրությունը և երկիրը շունչ քաշելու և ուժերը վերականգնելու կարիք ուներ:

1970թ. հուլիսի 31-ին Իսրայելը, որը սկզբնական փուլում դեմ էր հանդես եկել «Ռոջերսի ծրագրին», ևս հայտարարեց դրան միանալու իր պատրաստակամության մասին: Զինադադարի վերաբերյալ համաձայնությունն ուժի մեջ մտավ 1970 թ. օգոստոսի 7-ին [20] : Իսրայելը դրանով ստացավ ռազմական գործողություններում ժամանակավոր հանգիստ ձեռք բերելու հնարավորություն, իսկ ռազմական ծախսերի որոշակի կրճատումն իսրայելական կողմին հնարավորություն տվեց ֆինանսական միջոցներն ուղղել երկրի տնտեսության մի շարք ոլորտների զարգացմանը[21]:

Եգիպտոսի և Հորդանանի կողմից «Ռոջերսի ծրագրի» ընդունումը նպաստեց Իսրայելի հետ «հյուծիչ պատերազմի» ավարտին և ուժերի վերադասավորմանը, միաժամանակ այն խորացրեց այն սուր հակասությունները, որ առկա էին Նասերի և պաղեստինյան որոշ կազմակերպությունների միջև հարաբերություններում: Նոր թափ ստացան հակաեգիպտական ելույթները, սուր քննադատություն և անձնական վիրավորանքներ հնչեցին՝ ուղղված նախագահ Նասերին: Մի քանի քննադատական ռադիոհաղորդումներից հետո, որոնցում դավաճանության մեղադրանքներ էին հնչում Եգիպտոսի նախագահի հասցեին, եգիպտական իշխանությունները ժամանակավորապես

[20]Эпштейн А.Д., Бесконечное противостояние. Израиль и арабский мир: войны и дипломатия, История и современность, Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 2003, с. 87, The Rogers Plan Was an American Peace Plan for the Middle East տե՛ս http://www.knesset.gov.il/lexicon/eng/rogers_eng.htm [մատչելի է 22.09.2016]

[21]Соколов Д.Г., նշվ. աշխ., էջ 163:

դադարեցրին ՊԱԿ-ի ռադիոեթերը, փակեցին ՖԱԹՀ-ին պատկանող «Ալ-Ասիֆա» ռադիոկայանը, իսկ որոշ պաղեստինցի արմատականներ վտարվեցին Եգիպտոսից:

Պաղեստինյան որոշ կազմակերպությունների և Նասերի միջև առկա հակասությունները հարթելու նպատակով 1970 թ. օգոստոսի սկզբին պաղեստինյան պատվիրակություններն Արաֆաթի գլխավորությամբ Ալեքսանդրիայում հանդիպեցին Եգիպտոսի նախագահի հետ: Սակայն առկա տարաձայնություններն հարթել այդպես էլ չհաջողվեց, քանի որ Նասերն իր աջակցությունը հայտնեց Հորդանանի Հուսեյն թագավորին, որն այդ ընթացքում լուրջ խնդիրներ ուներ իր երկրում հաստատված ՊԱԿ-ի մեջ մտնող մի շարք խմբավորումների հետ: Դրանք դարձել էին «պետություն պետության մեջ» և փորձում էին գահընկեց անել Հորդանանի Հուսեյն թագավորին [22] : 1970 թ. օգոստոսի կեսին Եգիպտոսի նախագահի և պաղեստինյան մի շարք ուժերի միջև հակամարտությունը հանդարտվեց՝ հիմնականում պաղեստինյան առաջնորդների մոտ «պայքարի երկրորդ ճակատ բացելու» հնարավորության բացակայության պայմաններում, քանի որ Հորդանանում արդեն իսկ ՊԱԿ-ն ուներ բավական լուրջ խնդիրներ[23]:

Ամփոփելով հոդվածը կարող ենք փաստել, որ 1969-1970թթ. Մերձավոր Արևելքում ակտիվ փորձեր էին իրականացվում արաբ-իսրայելական հակամարտության կարգավորման ուղղությամբ: Բանակցային սեղանին դրվեցին մի քանի ծրագրեր, որոնցից առավել հայտնի էին Ալլոնի, Հուսեյնի և Ռոջերսի ծրագրերը:

[22] Кон-Шербок Д., эль-Алами Д., նշվ. աշխ., էջ 242:

[23]Клява А.Я., Формирование организационных структур палестинского национального движения, տե՛ս Ближний Восток и современность, Институт изучения Израиля и Ближнего Востока, Вып. 18, М., 2003, с. 185.

Սակայն հակամարտության մեջ ներգրավված կողմերին ուսումնասիրվող շրջանում այդպես էլ չհաջողվեց հասնել համաձայնության: Նշենք, որ Եգիպտոսի կողմից «Ռոջերսի ծրագրի» հանդեպ դրական չեզոքությունն, ապա նաև այդ ծրագրի ընդունումը հանգեցրեց վերջիններիս և պաղեստինյան մի շարք կազմակերպությունների միջև տարաձայնությունների սրմանն ու միջարաբական հակասությունների է՛լ ավելի խորացմանը: 1970թ. Եգիպտոսի, Հորդանանի ապա նաև Իսրայելի կողմից «Ռոջերսի ծրագրի» ընդունումը նպաստեց Իսրայելի հետ «հյուծիչ պատերազմի» ավարտին և արաբ-իսրայելական համակարտության համատեքստում ուժերի վերադասավորմանը:

ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ (1969-1970ԹԹ)

Ամփոփում

Էդիտա Ասատրյան
edit-asatryan@mail.ru

Բանալի բառեր՝ *Արաբ-իսրայելական հակամարտություն, հյուծող պատերազմ, խաղաղ կարգավորում, պաղեստինյան հիմնախնդիր, «Ռոջերսի նախագիծ», «Ալլոնի ծրագիր», «Հուսեյնի ծրագիր»:*

1967թ. 6-օրյա արաբ-իսրայելական պատերազմում Իսրայելին կրկին հաջողվեց հաղթել և բռնազավթել արաբական մի շարք տարածքներ, այդ թվում և Արևելյան Երուսաղեմը: Ըստ էության արաբ-իսրայելական հակամարտությունը թևակոխեց էլ ավելի բարդ ու ծայրահեղ լարված փուլ: Միևնույն ժամանակ արաբ-իսրայելական հակամարտության առանցքը կազմող պաղեստինյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման

անհրաժեշտությունը դարձավ միջազգային հարաբերությունների քաղաքական օրակարգի կարևոր բաղադրիչը: 1969-1970-ականներին արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված նախաձեռնությունները մասնավորապես՝ Իսրայելի փոխվարչապետ Ալլոնի, Հորդանանի Հուսեյն թագավորի և ԱՄՆ-ի պետքարտուղարության «Ռոջերսի » ծրագրերը սակայն, չկարողացան որևէ դրական տեղաշարժ առաջացնել նշված խնդրում: Արաբ-իսրայելական հակամարտության և պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորման նախաձեռնությունների ձախողումը հանգեցրեց արաբ-իսրայելական նոր պատերազմի և «միջազգային հարաբերությունների կայունության» խարխլմանը:

EGYPT AND THE ARAB-ISRAELI CONFLICT PEACE PLANS IN 1969-1970

Summary

Edita Asatryan
edit-asatryan@mail.ru

***Keywords**: Arab-Israeli conflict, Yigal Allon's plan, Jordan's King Hussein's plan, U.S. Secretary of State William Rogers' plan, several peace plans of Arab-Israeli conflict, Palestinian organizations, "War of Attrition".*

In 1969-1970 there were several peace plans of Arab-Israeli conflict among which were Yigal Allon's, Jordan's King Hussein's and U.S. Secretary of State William Rogers' plans. Firstly, Egypt's loyalty towards Rogers' plan and later its adoption brought to a deep confrontation between different Palestinian organizations and Egypt as well as escalated inter-Arab contradictions. In 1970 Egypt's, Jordan's and Israel's adoption of Rogers initiative aimed at bringing about a truce in the "War of Attrition" and leaded to a reshuffle of forces within Arab-Israeli conflict.

ЕГИПЕТ И ПЛАНЫ МИРНОГО УРЕГУЛИРОВАНИЯ АРАБО-ИЗРАИЛЬСКОГО КОНФЛИКТА 1969-1970гг.

Резюме

Едита Асатрян
edit-asatryan@mail.ru

Ключевые слова: *Арабо-израильский конфликт, план Аллона, план Хусейна, план Роджерса, «война на истощение», «положительный нейтралитет».*

1969-1970гг. обусловились выдвижением планов мирного урегулирования арабо-израильского конфликта. Из всех предложенных наиболее известными были планы Аллона, Хусейна и Роджерса. Однако, несмотря на всю значимость этих проектов, конфликтующим сторонам так и не удалось прийти к консенсусу. Позиция положительного нейтралитета Египта, а потом его принятие им привело к разногласиям с некоторыми палестинскими организациями, что в итоге радикальным образом обострило межаражские взаимоотношения в контексте арабо-израильского конфликта.

Одновременно важно отметить, что принятие Египтом, Иорданией и Израилем «плана Роджерса» способствовало окончанию «войны на истощение» между Египтом и Израилем, а также перестановке сил в контексте арабо-израильского конфликта.